# Սղաճը Հայաստանում. Ինչ է կատարվում գների հետ Հայաստանում

**Նիկե Օմես**
Արժույթի միջազգային հիմնադրամի
Մշտական ներկայացուցիչ
Հայաստանում

www.imf.org/yerevan

# Համառոտ բովանդակություն

1. Ինչ է գնաճի նպատակադրումը (ԳՆ)
2. Ինչպես է չափվում գնաճը Հայաստանում
3. Գնաճի վերջին զարգացումները
4. Ինչու են սննդամթերքի գներն աճել 2007թ.
5. Հայաստանը համեմատ այլ երկրների
6. Քաղաքականության վերաբերյալ խորհուրդներ

# 1. Ինչ է գնաճի նպատակադրումը

- Դրամավարկային քաղաքականությունն առաջին անգամ ներդրվել է Նոր Զելանդիայում 1990 թ.
- Կենտրոնական բանկն սահմանում է գնաճի թվային թիրախ, օրինակ՝
  - Թիրախի միջակայք. 1-3% Նոր Զելանդիայում
  - Կետային թիրախ. 2% Միացյալ Թագավորությունում, 2.5% Նորվեգիայում
  - Կետային թիրախ գումարած միջակայք: 2±1% Կանադայում և Շվեդիայում
- Կենտրանական բանկը չպետք է սահմանի թիրախներ այլ փոփոխականների համար (օրինակ՝ փոխարժեք, դրամական ագրեգատներ)
- Կենտրոնական բանկի գնաճի կանխատեսումը պետք է մոտենա գնաճի թիրախին, որը կենտրոնական դեր ունի դրամավարկային քաղաքականությունում
- Կենտրոնական բանկերը պետք է լինեն անկախ, թափանցիկ և հաշվետու (ոչ մի գաղտնիք)
- Հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է նույնպես նպաստի գնաճի թիրախի ձեռքբերմանը

- 2007թ. դրությամբ ԳՆ-ն իրականացվում էր 27 երկրներում
- Գնաճի կայունացման և ՀՆԱ-ի աճի ապահովման հարցերում ԳՆ-ն ավելի արդյունավետ է քան դրամավարկային քաղաքականության մյուս ռեժիմները (դրամի նպատակադրում, փոխարժեքի նպատակադրում)

# Գնաճի նպատակադրումը Հայաստանում

- ԳՆ-ի սկզբնական փուլը Հայաստանում իրականացվել էր 2006 թ.
- Առաջնային նպատակ. ապահովել գների կայունություն
- Գնաճի ցուցանիշ. սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ) աճ տեմպ
- Թիրախի միջակայք. 4% ±1.5%
- Անվանական խարիսխ. գնաճի կանխատեսում
- Ժամանակային հորիզոն. 12 ամիս
- Գործառնական թիրախ. կարճաժամկետ տոկոսադրույք
- Հիմնական գործիք. ՌԵՊՈ (վերաֆինանսավորում) գործարք
- Հաշվետվություն և թափանցիկություն. եռամսյակային գնաճի մասին հաշվետվություն, տոկոսադրույքի մասին եռամսյակային արձանագրություններ, ամսեկան մամլո հաղորդագրություններ, արձանագրություններ տոկոսադրույքի մասին Խորհրդի նիստից հետո, ԿԲ-ի ամսեկան Տեղեկագիր, երկամյա դրամավարկային ծրագիր, որը ներկայացվում է Ազգային Ժողով և այլն:

# Գնաճի թիրախները Հայաստանում

- 2006 թ.
  - Թիրախ. 3%, հետագայում վերանայվել է 5±1.5 %
  - Փաստացի. 5.2%
- 2007
  - Թիրախ. 3±1.5 %, հետագայում վերանայվել է 4±1.5 %
  - Փաստացի. 6.6 %
- 2008
  - Թիրախ. 3±1.5 %, հետագայում վերանայվել է 4±1.5 %
  - Փաստացի. ?

# 2. Ինչպես է գնաճը չափվում Հայաստանում

- Գնաճ = Սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ) աճ տեմպ
- ՍԳԻ = 470 ապրանքների և ծառայությունների զամբյուղի գին
- Այս գինը *միջին* է և այն միջինացված է.
  - 470 ապրանքների և ծառայությունների
  - 11 շրջանների (Երևան գումարած10 մարզեր), կշռված ըստ բնակչության
  - 9-12 տարբեր առևտրի կետեր յուրաքանչյուր ապրանքի համար յուրաքանչյուր շրջանում
  - ամսեկան 3 դիտարկումների (մոտավորապես ամսի 1-ին, 10-ին և 20-ին)
- ՍԳԻ զամբյուղում յուրաքանչյուր ապրանքի կամ ծառայության կշիռը հիմնված է տնային տնտեսությունների միջին ծախսերի կառուցվածքի վրա՝ Տնային տնտեսությունների կենսամակարդակի ուսումնասիրության տվյալների հիման վրա
- Այդ կշիռները վերանայվում են յուրաքանչյուր 3-5 տարի (վերջին վերանայումը տեղի է ունեցել 2006 թ.՝ 2004-05 թթ. համար անցկացված ուսումնասիրության հիման վրա)

# Ապրանքների և ծառայությունների ՍԳԻ-ի կշիռները

| | |
|---|---|
| **Պարենային** | **53.9%** |
| Հաց և հացամթերք | 14.9% |
| Մսամթերք | 9.5% |
| Խմիչք և ծխախոտ | 5.9% |
| Բանջարեղեն | 4.7% |
| Կաթնամթերք | 4.3% |
| Բուսական և կենդ. յուղ | 4.1% |
| Միրգ | 2.6% |
| Այլ | 8.0% |

| | |
|---|---|
| **Ծառայություններ** | **29.9%** |
| Էլեկտրաէներգիա | 4.9% |
| Վիրաբուժական ծառայութ. | 4.3% |
| Բարձրագույն կրթություն | 2.5% |
| Օդային փոխադրումներ | 1.4% |
| Գազ | 1.3% |
| Տաքսի ծառայություն | 0.9% |
| Դիագնոստիկ բուժում | 0.9% |
| Այլ | 13.6% |

| | |
|---|---|
| **Այլ ապրանքներ** | **16.2%** |
| Բենզին | 2.6% |
| Լվացքի փոշի | 0.6% |
| Հեղուկ գազ | 0.5% |
| Գունավոր հեռուստացույց | 0.5% |
| Ջրում լուծվող հաբեր, Aspirin UPSA | 0.3% |
| Անդրավարտիկ | 0.3% |
| Սրտ. հիվանդ. դեմ դեղամիջոցներ | 0.3% |
| Այլ | 11.1% |

# 3. Գնաճի վերջին զարգացումներ



# Գնաճին նպաստումները
(Դեկտեմբեր 2007 թ. / Դեկտեմբեր 2006 թ.)

| | Կշիռ | Գնաճ | Նպաստում |
|---|---|---|---|
| Պարենային ապրանքներ | 53.9% | 9.7% | 5.2% |
| Ծառայություններ | 29.9% | 3.2% | 0.9% |
| Այլ ապրանքներ | 16.2% | 2.5% | 0.4% |
| Ընդամենը | **100.0%** | **6.6%** | **6.6%** |

# Պարենային ապրանքների գնաճի կառուցվածքը



# Պարենային ապրանքների գների նպաստումներ (Դեկտեմբեր 2007 թ. / Դեկտեմբեր 2006 թ.)

| | Կշիռ | Գնաճ | Նպաստում |
|---|---|---|---|
| Հաց և հացամթերք | 14.9% | 23.9% | 3.6% |
| Բուս. և կենդ. յուղեր | 4.1% | 29.2% | 1.2% |
| Միրգ | 2.6% | 15.9% | 0.4% |
| Մսամթերք | 9.5% | 2.7% | 0.3% |
| Բանջարեղեն | 4.7% | -5.3% | -0.3% |
| Այլ սննդամթերք | 18.2% | 0.5% | 0.1% |
| Ընդամենը | **53.9%** | **9.7%** | **5.2%** |

# 4. Ինչու են սննդամթերքի գներն աճել 2007թ.

- Աշխարհում սննդի նկատմամբ պահանջարկի աճ
  - ՀՆԱ-ի մեծ աճ (Չինաստան, Հնդկաստան)
  - Էլեկտրաէներգիայի բարձր գներ → եգիպտացորենի նկատմամբ պահանջարկի աճ (էթանոլ)
- Աշխարհում սննդամթերքի առաջարկի կրճատում
  - Անբարենպաստ եղանակ (համընդհանուր տաքացում)
  - Էներգակիրների բարձր գներ → վարելահողերի օգտագործում կենսաբանական վառելիքի արտադրության համար
- Հայաստանում սննդամթերքի գների դրսևորումները հիմնականում կրկնում էին համաշխարհային գների զարգացումները
- Սննդամթերքի գներն աճել են նաև այլ երկրներում

# Աշխարհում սննդամթերքի նկատմամբ պահանջարկի աճ

- ՀՆԱ-ի բարձր աճ, հատկապես Չինաստանում և Հնդկաստանում (աշխարհի բնակչության 40 %)
- Քանի որ Չինաստանում և Հնդկաստանում մարդիք հարստացել են, նրանք ցանկանում են ավելի շատ մսամթերք և կաթնամթերք սպառել
- Մսամթերքի նկատմամբ պահանջարկի աճ → հացահատկի նկատմամբ պահանջարկի աճ (մեկ կիլոգրամ տավարի մսի արտադրության համար պահանջվում է 7 կիլոգրամ ցորեն)
- Ցորենի գնի աճ → ֆերմերները սկսում են օգտագործել եգիպտացորեն կենդանիներին կերակրելու նպատակով → եգիպտացորենի գնի աճ
- Նավթամթերքի գնի աճ → կենսաբանական վառելիքի նկատմամբ պահանջարկի աճ (օրինակ՝ եգիպտացորենի օգտագործում էթանոլի արտադրության համար) → եգիպտացորենի գնի աճ (վերջին 2 տարիներին եգիպտացորենի համաշխարհային գները գրեթե կրկնապատկվել են)

# Աշխարհում սննդամթերքի առաջարկի կրճատում

- Ցորենի վատ բերք Ուկրաինայում, Ռուսաստանում, Եգիպտոսում, Ավստրալիայում
- Երաշտ Ավստրալիայում → Ավստրալիայում կաթնամթերքի արտադրանքի կրճատում
- Երաշտ հյուսիսային և արևմտյան Չինաստանում (27 միլիոն ակրի չորացում)
- Ջրհեղեղներ հարավային Չինաստանում (21.5 միլիոն ակրի խորտակում)
- Ինդուստրիալիզացիա Չինաստանում (2000-2005 թվականների ընթացքում Չինաստանում տարեկան 3 միլիոն ակր վարելահողի կորուստ է տեղի ունեցել)
- ԵՄ-ի կշռի արագ կրճատում կաթնամթերքի համաշխարհային շուկաներում
- Կենսաբանական վառելիքի նկատմամբ պահանջարկի աճ → սննդամթերք արտադրելու համար ավելի քիչ հող է հատկացվում → սննդամթերքի գների աճ

# Հայաստանում հացի գնի աճը համապատասխանում է Ռուսաստանում ցորենի արտահանման գնին



# Հայաստանում արևածաղկի ձեթի գինն աճել է ԱՄՆ-ի գներին համապատասխան



# Հայաստանում կարագի գինը աճել է Օվկիանիայի և ԵՄ-ի գների համապատասխան (բայց ավելի քիչ)



# Հայաստանում շաքարի գինը աճել է համաշխարհային շուկայում գնի աճին համապատասխան, սակայն հետագայում այն չի նվազել



# Աճող գնաճը տարածաշրջանային երևույթ է




(Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան, Ուզբեկստան)

# 5. Հայաստանը համեմատ այլ երկրների

- ԱՊՀ այլ երկրների համեմատ Հայաստանում գնաճն ավելի ցածր է
- Զարգացած երկրների գների համեմատ Հայաստանում գները համեմատաբար ավելի ցածր են
- Սակայն, ԱՊՀ այլ երկրներ համեմատ, Հայաստանում ներմուծման գները համեմատաբար ավելի բարձր են

# ԱՊՀ այլ երկրների համեմատ Հայաստանում գնաճը ցածր է





Արդբեջան
26
24
22
20
18
16
14
12
10
8
6
4
2
0
Հունվ-05
Մար-05
Մայ-05
Հուլ-05
Սեպ-05
Նոյ-05
Հունվ-06
Մար-06
Մայ-06
Հուլ-06
Սեպ-06
Նոյ-06
Հուն-07
Մար-07
Մայ-07
Հուլ-07
Սեպ-07
Նոյ-07
Ընդհանուր ՍԳԻ գնաճ
Ոչ-պարենային գնաճ



Վրաստան
16
14
12
10
8
6
4
2
0
ՍԳԻ ընդհանուր գնաճ
Ոչ-պարենային գնաճ
Հունվ-05
Մար-05
Մայ-05
Հուլ-05
Սեպտ-05
Նոյ-05
Հունվ-06
Մար-06
Մայ-06
Հուլ-06
Սեպ-06
Նոյ-06
Հունվ-07
Մար-07
Մայ-07
Հուլ-07
Սեպ-07
Նոյ-07


Ղազախստան
20
18
16
14
12
10
8
6
4
2
0
Հունվ-05
Մար-05
Մայ-05
Հուլ-05
Սեպ-05
Նոյ-05
Հունվ-06
Մար-06
Մայ-06
Հուլ-06
Սեպ-06
Նոյ-06
Հունվ-07
Մար-07
Մայ-07
Հուլ-07
Սեպ-07
Նոյ-07
ՍԳԻ ընդհանուր գնաճ
Ոչ-պարենային գնաճ


Ղրղզստան
ՍԳԻ ընդհանուր գնաճ
Ոչ-պարենային գնաճ
24
22
20
18
16
14
12
10
8
6
4
2
0
Հունվ-05
Մար-05
Մայ-05
Jul-05
Սեպ-05
Նոյ-05
Հունվ-06
Մար-06
Մայ-06
Հուլ-06
Սեպ-06
Նոյ-06
Հունվ-07
Մար-07
Մայ-07
Հուլ-07
Սեպտ-07
Նոյ-07


Տաջիկստան
22
20
18
16
14
12
10
8
6
4
2
0
Հունվ-05
Մար-05
Մայ-05
Հուլ-05
Սեպ-05
Նոյ-05
Հունվ-06
Մար-06
Մայ-06
Հուլ-06
Սեպ-06
Նոյ-06
Հունվ-07
Մար-07
Մայ-07
Հուլ-07
Սեպ-07
Նոյ-07
ՍԳԻ ընդհանուր գնաճ
Ոչ-պարենային գնաճ



Հայաստան
10
8
6
4
2
0
-2
-4
ՍԳԻ ընդհանուր գնաճ
Ոչ-պարենային գնաճ
Հունվ-05
Մար-05
Մայ-05
Հուլ-05
Սեպ-05
Նոյ-05
Հունվ-06
Մար-06
Մայ-06
Հուլ-06
Սեպ-06
Նոյ-06
Հունվ-07
Մար-07
Մայ-07
Հուլ-07
Սեպ-07
Նոյ-07

# Ինչու է գնաճն ավելի ցածր Հայաստանում

- Գնաճի նպատակադրման ռեժիմ
  - Համեմատաբար սահմանափակ փոխարժեքային միջամտության
  - Տոկոսադրույքների բարձրացում
- Զսպողական հարկաբյուջետային քաղաքականություն
- Գազի ներմուծման ավելի ցածր գներ

# ԱՄՆ-ի գների նկատմամբ տոկոսային արտահայտությամբ Հայաստանում գները դեռևս ցածր են (սակայն աճում են)




Աղբյուր. IMF, World Economic Outlook

# Հայաստանում հացի գինը համեմատաբար բարձր է




Աղբյուր. ԱՊՀ երկրների Միջպետական վիճակագրական կոմիտե

# Հայաստանում կարագի գինը համեմատաբար բարձր է




Աղբյուր. ԱՊՀ երկրների Միջպետական վիճակագրական կոմիտե

# Հայաստանում բուսական ձեթի գինը շատ բարձր է




Աղբյուր. ԱՊՀ երկրների Միջպետական վիճակագրական կոմիտե

# Հայաստանում շաքարի գինը համեմատաբար ցածր է




Աղբյուր. ԱՊՀ երկրների Միջպետական վիճակագրական կոմիտե

# Հայաստանում ձվի գինը շատ բարձր է




Աղբյուր. ԱՊՀ երկրների Միջպետական վիճակագրական կոմիտե

# Ինչով է բացատրվում Հայաստանում ներմուծման համեմատաբար բարձր գները

- Տրանսպորտային ծախսեր
- Երկրի փոքր չափերը (մասշտաբի էֆեկտի բացակայություն փաթեթավորման, բաշխման, մարկետինգի և այլ ոլորտներում)
- Անկատար տեղեկատվություն և գնորդների որոնման հետ կապված մեծ ծախսեր
- Վաճառողների միջև սահմանափակ մրցակցություն
- Փոխարժեքի բարձր արժևորում՝ անբավարար գներին փոխարժեքի փոխանցման մեխանիզմի հետ մեկտեղ

# Գնաճային ռիսկերը 2008 թ.

- Փոխարժեքի զգալի ներհոսքներ (մասնավոր փոխանցումներ, ԱՌԻՆ-եր, անշարժ գույք, արտաքին օգնություն)
- ՀՆԱ-ի բարձր աճ
- 60% կենսաթոշակների բարձրացում
- Սննդամթերքի գների հետագա աճ
- Էներգակիրների գների հետագա աճ

# 5. Քաղաքականության վերաբերյալ խորհուրդներ

- Բարձրացնել գնաճի նպատակադրման արդյունավետությունը
  - Ավելացնել մրցակցությունը բանկերի միջև
  - Նվազեցնել դոլարիզացիան
  - Ֆինանսական շուկաների շարունակական զարգացումը
  - Չփոփոխել գնաճի թիրախն ի պատասխան արտաքին ցնցումների
  - Ընդլայնել ԳՆ-ի հորիզոնը մի քանի տարով
- Նպաստել Հայաստանում ներմուծման գների նվազմանը
  - Բարելավել ենթակառույցները → կրճատել տրանսպորտային ծախսերը
  - Ավելացնել ներմուծողների միջև մրցակցությունը
  - Ավելացնել Տնտեսական մրցակցության պաշտպանության կոմիտեի լիազորությունները
- Խստացնել հարկաբյուջետային քաղաքականությունը
  - Սահմանափակել կառավարության ծախսերը
  - Ավելացնել հարկային եկամուտները
- Բարելավել հասարակության գիտելիքները գնաճի նպատակադրման վերաբերյալ
  - Բացատրել ինչպես է չափվում գնաճը
  - Բացատրել ինչու էին խախտվել գնաճի թիրախները